



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ք. ՏԱՐԻ ԹԻԻ 16

ՀԱՄԱՐԱԹ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԵԳՂՑՅԱՆՈՒՄ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ՍՈՍՆԱԿԱՐԳ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԼԻ


Պաշտ-Գաղու, Օռուդա-Պաշ հաստատութեան գէմ, Թիւ. 16

(آ. آسادوریان) شرکت مطبوعه مطبوعه — باب عالی جا سندھ و مرم ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հաստատութիւն Թիւ 52

Հատոր 40 փաթա



Ձեռնի, ոտի ու ոտի եւ ձեռնի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեան
եւ տագնապի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՍ. ՊԱՆՍԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կտորեկ կտորեկ ածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

ձեջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց ձեջ:

ՆԱԽԱՐԱՐԱՆԻ
ՆԱԽԱՐԱՐԱՆԻ
ՆԱԽԱՐԱՐԱՆԻ

ԲԵՐՍ

(1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.

(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊԱԼԻՍ

(1. Սուլթան համամ .

(2. Սուլթան Պէյազի, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵԻԻՏԱՐ

Չարչը Պոյու, թիւ 120 .

Կասաբեալ երախաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւզդուրի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱՆ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
սոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. դա-
ւառներու համար տարեկան 108 դր. վեց-
ամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաւ փաւա: ԱՐԵԻԵԼՔ
հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խըմ-
բագրութեամբ և իր կարող աշխատակիցներ-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶՍՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսա-
րաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւ այլն,
բայ ի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւ այլն:

ԱՐԵԻԵԼՔ վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագին լայն տէր է ուղղել. Տէր և
Տնօրէն Գարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մանուկտէի Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թերթին տպարանն ու խըմ-
բագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 16

ՇԱՐԱԹ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԻՆՃԷԵԱՆ ԷՖ.ԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆՍ^(*)

ԻՆՃԷԵԱՆ ԷՖ. ԵՒ ԹԵՈՂԻԿ ԷՖ.

Ինճէեան էֆ. Մասիսի մէջ չորս յօդուածներով աշխարհաբարի մասին իր տեսութիւնները պարզելով, եզրակացուցեր էր որ, այսօրուան գրուած լեզուին մէջ տիրապետող անօրինակ անմիակերպութեան վերջ մը տալու միակ ու բանաւոր միջոցն էր, իբր հայ տնտեսական լեզու (idiome armenien) բնորոշիլ Պոլիսի աշխարհաբարը եւ անոր օրէնքներով գրել, նկատելով որ Պոլիսի գաւառաբարբառը (dialecte) բոլոր հայ գաւառաբարբառներուն մէջ ամէնէն աւելի ծաղկածը ու զարգացածն է և թէ իր ներկայ վիճակին մէջ

առակ է արտայայտելու ամէն գաղափար (Տես մանրամասնութիւն Մասիս թիւ 40 և 42):

Ինճէեան էֆ. իր այս ողջամիտ սկզբունքը մէջտեղ դնելէն ու պաշտպանելէն ետք, վերջին երկու յօդուածներով (Մասիս թիւ 44 և 45) ալ ցոյց կու տայ Պոլիսի աշխարհաբարին քերականութիւնը իր գլխաւոր կէտերուն մէջ: Թէոդիկ էֆ. Ինճէեան էֆ. ի գրած յօդուածներուն միայն քերականական մասը կ'առնէ — սկզբունքի խնդիրի մասին առանց բան մը ըսելու, ուրկէ հետեւցունեք պէտք կ'ըլլայ թէ անոնց ինք ալ համակարծիք է — և իր հասկցողութեան չափով կը քննադատէ զանոնք Արեւելի մէջ: Ինճէեան էֆ. երեք յօդուածներով կը պատասխանէ անոր և այս վիճարանութիւնը այլեւս իրեն համար փակուած կը հռչակէ, նկատելով որ

(*) Ինճէեան էֆ. ի քերականութեան կատարելապէս համակարծիք գտնուելուս պատճառով, իր քերականութեան համաձայն գրեցի պաշտպանողական:

երկու կողմէն ամէն ինչ ըստած ըլլալով, դատաւանը ընթերցողին մնալու էր և թէ նոյն բաներուն համար երկկողմանի նոր կրկնութիւններ ընել, ջուրը սանդին մէջ ծեծելու անիմաստ գործողութեան պիտի նմանէր: Իրերը այս վիճակին մէջն էին, երբ զուարթ Հանրագիտակին վերջին զուարթագոյն թիւին մէջ հանդիպեցայ Շախարեղեգի մը որ խընդիրը ինք ձեռք առեր էր, ինքնակոչ — և թերեւս ալ կոչեցեալ — փաստաբանը հանդիսանալով Թէոդիկ էֆ. ին: Արդ, ես, ստորագրեալս, մականուանեալն Մսրակ, կարդալով Շախարեղեգի պաշտպանողականը Թէոդիկ էֆ. ին, մտածեցի թէ ես ինչու ինքնակոչ փաստաբանը չի պիտի ըլլայի Խնճեան էֆ. ին: Անոնց որ առարկելու վրայ են թէ — Խնճեան էֆ. ինք փաստաբան ըլլալով քեզի ինչ պէտք ունի, քեզի որ փաստաբան ալ չ'ես — անոնց ամէնուն ալ կը փութամ պատասխանել որ քեզի իւրքիւնի իրեանք խօսքը մեղքուր խօսք մը նէ և թէ չ'ըլլալիք բան ալ չ'է որ Խնճեան էֆ. իր վերջին յօդուածին առիթով կատարուած լրհնուկութիւնէն գանա՞ծ, քանի ըրած ըլլայ և ա'լ ոչ այդ նիւթին, ոչ ա'լ այդ ընդդիմախօսին խօսքը ընելու եղղում ըրած ըլլայ: Ատոր համար, ես զոր արդարութիւնը իսկ եմ և երբեք չ'եմ հանդուրժեր որ մէկու մը — ո՛ւր մնաց Խնճեան էֆ. իս — անիրաւութիւն ըլլայ, ի՞նչ ինքզինքս մուսսաւագ վեֆիլը կը հռչակեմ Խնճեան էֆ. ին և կ'սկսիմ պաշտպանողականս, հրաւէր կարդալով աշխարհի բոլոր շախարեղեգներուն, գալու չափուելու հետս, որպէս զի ցոյց տամ անոնց թէ, ես, մականուանեալս Մսրակ, ինտոր կը կոտորեմ անոնց ամէնուն ալ եղեգները (որ թարգմանի խամիթ) ըլլան անոնք, շախար կամ շախ քար: Օն ուրեմն: Թէոդիկ էֆ. ի փաստաբանը շախարեղեգ կը բացագանչէ « փաստաբան-բանաւէր մը և գրագիր-բանասէր մը իրարու հետ բռնուեցան: Այդ երկու բանասէրներէն մէկուն դրամագլուխը տրամաբանութիւնն է, մէկալինը գրագիրութիւնը: Տեսնե՞ք թէ այս առթիւք յօդներէն ո՞րը աւելի շատ կը քշուի եղեր աշխարհաբարի հրապարակին վրայ: Հայտէ՛ նայինք: »

* * Խնճեան էֆ. ըսեր էր « իսկ ընտ-

նիք, ընդունիլ եւայլն բառերով ընդի գործածութիւնը, առնուով առի գործածութիւնը, ցորեկով ցի գործածութիւնը արդարացունելիդ կը խոստովանինք որ մեր հասկցողութենէն վեր, շատ վեր է և կարողագոյններու օգնութիւնը կը հայցենք: Կատարելապէս կը սխալիք ուրեմն երբ ձեր այդ մէջ բերած օրինակներուն համար կ'ըսէք թէ սովորութիւնը նուիրագործեր է զանոնք (ոչ զիրենք) . . . »:

Թէոդիկ էֆ. ի փաստաբանը շախարեղեգ՝ կը խորհրդածէ « բայց աս ինչ տրամաբանութիւն է, մէյ մը ելլալ աստեկ բաներու խելքըս չը հասնիր ըսել, եաքն ալ նոյն բանը կատարելապէս սխալ հռչակել ամէն autoritéով: Այս պարագային մէջ պաշտպանեալս եղող Թէոդիկ էֆ. ին ուրիշ բան չը մնար, բայց եթէ խնդիրը երկրորդ յօդուածով մը խաբինա՞ծ ընել և օրէնքով՝ հակառակորդ կողմին անճարակութիւնը հաստատող վճիռ ձեռք ձգել »:

Ես, Մսրակ, ինքնակոչ փաստաբանը Խնճեան էֆ. ին կը պատասխանեմ « ծօ՛ խեղճուկ շախարեղեգ չը կրցա՞ր հասկնալ որ Խնճեան էֆ. ին աստեկ բաներու մեր խելքը չը հասնիր, ատոնք մեր հասկցողութենէն վեր բաներ են ըսելը հեզմակա՞ն, ծաղրակա՞ն էր. ասիկա հասկնալու էիր քանի որ անմիջապէս ետեւէն տիրական շեշտով մը հաստատեր է թէ կատարելապէս սխալ ու անիմաստ բան է աշխարհաբարի մէջ ընդ, բոս, առ եւայլն նախադրութիւններու գործածութիւնը արդարացունել, որովհետեւ անոնք աշխարհաբարի մէջ ընդունուած քանի մը բառերու առջեւօքը կամ մէջտեղօքը կամ ետեւօքը կը գտնուին եղեր: Օրինակի համար ընդունիլին մէջ ընդ կայ եղեր որովհետեւ ընդունիլը կազմուած է եղեր ընդով և ունելով, ընտանիք ընդով և տանիքով, առնուն առով և աւօտով եւայլն: Ասիկա փաստաբանի տրամաբանութիւնն չէ՛ չէ՛, գրագիրի տրամաբանութիւնն ալ ըլլալու չէ՛ (չորպանին չ'իմանայ), ասիկա ո՛վ շախարեղեգ, կրնայ շատ քար գլուխի մը տրամաբանութիւնը ըլլալ չա՛տ չա՛տ: Իսկ եթէ պաշտպանեալինիդ միտք ունի նոր յօդուածով մը խնդիրը խաբինա՞ծ ընելով իմ պաշտպանեալիս քացակայութեան

(կընապի) վճիռ մը ձեռք ձգելու, այն ատեն իմ պաշտպանեալս ալ կրնայ խնդիրը քննիչ ընել ու այս անգամ քեփքեմիզ հանել պաշտպանեալնիդ, նկատելով որ անիկա քննիչ ատենաներու առջեւ լղբճուկ ու գճուճ կողմ-նակցութիւններ գտնելու յոյսը չը կրնար ունենալ:

* * Ինճէեան էֆ. ըսեր էր «Պոլսեցի ժողովուրդը ջուրի պէս կը գործածէ բացի բացը և երբեք չ'ըսեր բացի ի բաց, ինչպէս չ'ըսեր պատուհանէ ի պատուհան, տունէ ի տուն, մարդէ ի մարդ եւայլն»:

Մեծատրամաբան փաստաբանը շափարեղեգ կը պատասխանէ «անանկ է նէ ես ալ ըսեմ, գալով հապի խնդիրին ժողովուրդը զայն չ'ուտեր երբեք, ինչպէս չ'ուտեր քար, փայտ, ածուխ եւայլն»:

Շիտակ ըսէ՝ շափարեղեգ, այս խրլախ գիւտը ընելէդ ետք մենք փէք մենք քէյֆ չ'իմացար: Պէլքի ինքզինքդ ինչ գիտնամ, սանկ մէջնուր պուլունմազ հէրիֆի մը տեղը դիր: Բայց բանիս միտ դիր խեղճուկ շափարեղեգ: Երբ ինճէեան էֆ. կ'ըսէ թէ ժողովուրդը բացի ի բաց չ'ըսեր, ինչպէս չ'ըսեր տունէ ի տուն, մարդէ ի մարդ եւայլն, ըսել չ'ուղեր թէ ժողովուրդը բացի ի բաց չ'ըսեր, որովհետեւ չ'ըսեր մարդէ ի մարդ, տունէ ի տուն եւայլն. այլ ինտոր որ տունէ ի տուն մարդէ ի մարդ եւայլն չ'ըսեր, անանկ ալ բացի ի բաց չ'ըսեր:

Ի՞նչ փառով, փայտով ածուխով ըրածիդ պէս, ինճէեան էֆ. ալ մարդով, տունով, պատուհանով déduction մը չ'է որ կ'ընէ, այլ իրողութիւն մը, ճշմարտութիւն մը կը մատնանչէ, կը հաստատէ և անոր նմանող օրինակներ ալ կու տայ: Եթէ ասանկ բաներ հասկընալը խելապատակիդ գործը չ'է, խամուր իւրինք գարլեմա, իշդէ քեզի նասիհաթս:

* * Ինճէեան էֆ. ըսեր էր «մի մոռնաք որ այսօրուան Պոլիսի աշխարհաբարը թէեւ հին հայերէնին զաւակը, բայց անկէ բոլորովին տարբեր է, ունենալով իր քերականական յատուկ կազմակերպութիւնը: Դուք ալ ձեր հօրը զաւակն էք, բայց այսօր անկէ բոլորովին տարբեր անձ մը եղած էք»: Հնա-րիմաց շափարեղեգը կը պատասխանէ «իրաւ է որ ես հօրս զաւակն եմ, ու, թէեւ (!!!)

անկէ տարբեր անձ մը եղած եմ, բայց աս ու ան ինծի համար հօրը կը նմանի կ'ըսեն, ըսել է խօսուածքիս, քաղուածքիս, նըստուածքիս մէջ կայ անշուշտ բան մը որ հօրմէս եկեր ու մէջս մնացեր է»:

Կը պատասխանեմ. «Տեսա՞ր մի ես խելացի խօսքը, ըսելիք չի կայ թէ քու և հօրդ միջև առնչութիւն մը, բան մը կայ որ հօգեկան մտաւորական ու մարմնական նմանութիւն մը կը հաստատէ քու և հօրդ միջև. բայց այդչափ: Նմանութիւն մը միայն և ոչ թէ նոյնութիւն: Հետեւաբար ինչպէս որ դուն ինչ ինչ բաներու մէջ հեռուէն կամ մօտէն հօրդ կը նմանիս, առանց անոր հետ նոյն անձը ըլլալու, անանկ ալ աշխարհաբարը կրնայ գրաբարին հետ հեռաւոր կամ մերձաւոր նմանութիւններ ունենալ առանց անոր հետ նոյն լեզուն ըլլալու: Բայց ինչպէս որ դուն կարգ մը բաներու մէջ ալ հօրդ բոլորովին աննման ես — ենթադրենք օրինակի համար, (կ'ենթադրեմ որովհետեւ շափարեղեգ ըլլալնիդ գիտեմ թէեւ, բայց ո՞վ ըլլալնիդ չ'եմ գիտեր) որ քու բերանըդ հայկական եղած ըլլայ, մինչդեռ հօրդ բերանը յունական, այս պարագային մէջ չ'ենք կրնար անշուշտ ըսել որ քու բերանըդ հօրդ բերնին կը նմանի, որովհետեւ դուն հօրդ զաւակն ես — անանկ ալ աշխարհաբարը շատ մը բաներու մէջ գրաբարէն բոլորովին տարբեր է, անոր հետ հիշ նմանութիւն չ'ունի: Հասկցուեցա՞ւ: Տեսա՞ր որ նորէն կարողագոյններու կարօտ մնացինք:

* * Ինճէեան էֆ. ըսեր էր «Աշխարհաբարի մէջ ոչ դեպ ոչ ալ ի նախադրութիւնները ունինք առանձին, այլ միայն դեպի նախադրութիւնը որուն ինչ շարժական չ'է երբեք. և իվեր (depuis) նախադրութիւնը որ աշխարհաբարին հարազատ զաւակն է: (Ինճէեան էֆ. վերի և վարի իմաստ տուող ի վեր և ի վար նախադրութիւններու մասին առանձին խօսիլ խօստացած ըլլալով անոնք դուրսը կը մնան): Հետեւաբար, կը հարցունէ ինճէեան էֆ. թէ ինչ խելքով ու խիղճով այս դեպի և իվեր նախադրութիւններուն գրաբարի երեւոյթ մը տալ կ'ուզուի անոնց ինչ անշատ գրելով»:

Ասոր իբր պատասխան շափարեղեգ տիե-

զերքի, մթնոլորտի, արեւու, անդուսի կը տորի, երկինքի և դեռ ասոնց պէս բաներու խօսքեր կ'ընէ։ Այս խօսքերը միտքս կը ձգեն թէ ողիկ էֆ. ին ալ Հարաւային Ափրիկէի քաղաքներ եղող Բիէթէր Մարիցպուրկի և Պլէմֆօնթայնի համով հոսով բաղդատութիւնը, որ Ինճէեան էֆ. ի վրայ հարաւային հովերու աղղեցութիւնը ըրած էր։ Ո՛ւֆ, նոյն այն աղղեցութիւնը ես ալ զգալ կ'սկսիմ կոր, հետեւաբար թէօպէ, մենձ թէօպէ, ալ մէյ մը ն ալ Բիէթէր Մարիցպուրկի, Պլէմֆօնթայնի, մթնոլորտի, անդուսի կտորի եւայլն խօսքը չի պիտի ընեմ։ Parole :

* * Ինճէեան էֆ. պատասխանելով թէ-ողիկ էֆ. ի խօսքին թէ՝ « Լեզուի մը քերականութիւնը պատրաստելը դիւրին գործ չէ, մէկ օրէն միւսը ըլլալիք բան չէ և թէ լման կեանք մը յատկացունելու է անոր... » ըսած էր « մենք մեր գիտողութիւնները դըպրոցի գրասեղաններէն սկսելով՝ աղէկ մը հասունցունելէ ետք դեռ երէկ միայն մէջտեղ հանեցինք։ Դուք ձեր քննադատականը ի՞նչ պէս գրեցիք։ Յօդուածիս երեւնալուն հետեւեալ օրը ափափոյ գրեցիք զայն։ Այդչափ դիւրին բան է եղեր գրուած քերականութիւն մը քննադատելը » :

Շաֆարեղեգ ճարտարագոյն փաստաբանը կը պատասխանէ. « Աս տրամաբանութեան խելքս չը հասաւ։ Ո՛վ ըսաւ ձեզի (ոչ ձեզ) թէ ձեր ընդդիմախօսը իր պատասխանը մէկ օրուան մէջ պատրաստելու համար իրեն օգնութեան չէ կանչած ձեզի պէս 10-15 տարուան մէջ իր ամբարած գիտութիւնը, նպարավաճա՞ռ կը կարծէք արդեօք ձեր ընդդիմախօսը » :

Կը պատասխանեմ. ես քաջեղաւ. բայց եթէ Ինճէեան էֆ. ի ընդդիմախօսը պախալի տըրամաբանութենէն քիչիկ մը աւելին ունեցած ըլլար, այն ատեն չի պիտի ըսեր « Լեզուի մը քերականութիւնը պատրաստելու համար ամբողջ կեանք ժը յատկացունելու է անոր և ոչ թէ միզի պէս քանի մը օրը անգամ մը քանի մը ժամ զոհելով բաւականալու » մեծաշոնիք խօսքը, որովհետեւ ան ալ ձեզի պէս զգացած պիտի ըլլար որ Ինճէեան էֆ. իր գիտողութիւնները 10-15 երկար տարիներ աղէկ մը հասունցունելէ ետք միայն մէջտեղ

հանած է։ Ա՛լ հիմա՞ քերկուքնիդ ուզաւժիք եղէք. պախալի տրամաբանութիւն ունեցողը ընդդիմախօսն է որ « Լեզուի մը քերականութիւնը պատրաստելու գործը... լման կեանք մը պէտք է... » ըսեր է, առանց մտածած ըլլալու թէ Ինճէեան էֆ. իր գիտողութիւնները 10-15 տարի աղէկ մը հասունցունելէ ետք միայն մէջտեղ հանած է, թէ դուք էք, միւսիւ Շաֆարեղեգ, որ ափա մտածած ըլլալուդ հակառակ, ուզեր էք coûte que coûte պաշտպանել ձեր անպաշտպանելի պաշտպանեալը։

* * Ինճէեան էֆ. ըսեր էր « Ձեր գա-հալէժ աճապարանքին մէջ չէ՛ թէ միայն տպագրական ճղճիմ սխալներով զրաղելու չափ ամէն bon sens մէկ կողմ նետեր էք հապա և ըսեր էք անանկ անիմաստ և արտաոց բաներ որ տարրական դասընթացքի ամէնէն ծոյ աշակերտը (օրինակը ձերինն է) անգամ պիտի վարանէր ըսելու » :

Ասոր վրայ Շաֆարեղեգ կը խորհրդածէ. « Բայց այս բաները ըսող Ինճէեան էֆ. իր յօդուածին սկիզբն ալ ըսած չէ՛ր թէ ձեր քննադատականը նպատակաւոր աղտոտ միտումներէ բոլորովին զերծ է։ Արդ, հակասութեան մէջ ինչալու ասկէ աւելի հուժկու օրինակ կարելի՞ է երեւակայել » :

Ես, ՄՏՐԱԿ, կը պատասխանեմ, ետա՛ւ՝ խնայար ետա՛ւ, Ինճէեան էֆ. ին ի՞նչ... հակասութիւններն ալ բռնել, գիտեա եղեր, պուալ՝, կեցցես, բայց կեցի, կ'ելլաս իրաւ հաւտաս, խեղճուկդ Շաֆարեղեգ, Գիտցի որ նպատակաւոր աղտոտ միտումներ չ'ունենալը տարբեր բան է, bon sens, խելք չ'ունենալը, յղայական բաներ զուրցելն ալ տարբեր բան է։ Ինչպէս եւ ըլլալ և զեւ ըլլալ տարբեր բաներ են։ Ինճէեան էֆ. չէ՛ ըսած որ թէ-ողիկ էֆ. ն նպատակաւոր աղտոտ բաներ ըսաւ, այլ ըսած էր թէ bon sens դէմ մեղանչող, աղայական պօք բաներ ըսաւ։ Յաջողեցա՞յ հասկցունել, նրբամիտդ Շաֆարեղեգ։

* * Ինճէեան էֆ. ըսած էր. « Կ'երեւակայեմ որ ամօթէն շառագունեցաք արդէն... բարդութիւններու մասին ձեր ըսածներուն համար » :

Շաֆարեղեգ կը բացագանչէ. « Թէ ողիկ, է՛... ա՛լ երկար ըրիր. դուն խիղճ չ'ունիս » :

որ իրեն երանիներ կարգալու տեղ ելեր ե-
րանելի կ'ըսես բարդութիւնը հոյովումին հետ
շփոթած ըլլալուն համար»:

Ասիկա Պ. Շաբարեղեզ պինդերեսութեան
և կամ աւելի ճիշդը պինդգլուխութեան ուր
plus ultraն է: Համոզում գոյացունելէ վերջ
որ պաշտպանեալնիդ որ աստիճան ծաղրե-
լիորէն չ'էր կրցած հասկնալ Ինճէեան էֆ. ի
հայր, մայր, եղբայր եւ ասոց բարդութիւն-
ները ամենապարզ խօսքը, պարտաւոր էիք
ճանչնալ պաշտպանեալնիդ միտքի պաշարին
քանակը ու որակը, և խորհուրդ տալ իրեն
որ ա'լ ասկէ վերջը գոնէ, ճիզմեհն վեր չ'ել-
լայ, չ'ստանալու համար գլխուն Մտակի
հարուածները: Եթէ ճշմարիտ բարեկամու-
թիւն մը, պաշտպանութիւն մը կ'ուզէք ը-
նել իրեն, հասկցունէք որ ամէն դէպք ելողը
Հ. Ասատուր չ'է, անոր պէս կակուղիկ խա-
թըրջինաս, որ se condamner à ի մասին ըս-
ուածին պէս զոնչական սխալներ անպատաս-
խանի թողու և բարեարտութիւնը ունենայ իր
պատասխանը վերջացունելու — շնորհակա-
լութիւն կը յայտնեմ ձեր խնամումը գրա-
դատականին համար — ի պէս պատասխանին
ոգիին հիմնովին հակասող insolite գծերի-
մաններով:

(Շարունակելի եթէ Շաբարեղեզինը շա-
րունակելի է):

Ինճէեան էֆ. ի ինքնակոչ
փաստաբանը
ԾՏՐԱԿ

ՅԱՅՏՆԻ ԴԷՄՔԵՐ

ԱԲՐԱՀԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ

Պապա մարդ մը բառին բուն նշանակու-
թեամբը:

Զուարթաբան՝ զաւեշտագիր Այվազեանի
կղբայրը ըլլալը հասկցնող ...:

Հիւրասէր ծայր աստիճան:

Հետը խօսէ անգամ մը և քեզի զուրցէ
թէ ինչ նկարագրի տէր ես:

Նշանաւոր կենսագիր ու քրոնիկագիր իբր
կենսագիր՝ Մըմըրեանէն, Ասատուրէն և Ալ-
պոյաճեանէն շատ ու շատ աւելի կարծէժո-
ղովուրդին գրասէր զաւակներուն համար:

Իր ըրած կենսագրականները տարբեր համ մը
ուսին անոնցինէն, և քեզ երբեք չ'են ձանձ-
րացնէր, վկայ իր Շար Հայ կենսագրութեանց-
ները՝ որ ամէն անգամուն ձեռքդ առնելուդ
կրնաս կարգալ, ոճը սա'ուն ու գիւրդմբունի:

Նամակները նախ նեղ թղթերու վրայ կը
գրէ ու ապա մաքուրը կ'առնէ, և այն նեղ
թուղթերը գրուելէ հոքը գրպանը կը մտնէ:

Շատ հոգիներ հեռուէն Այվազեանը երի-
տասարդ կը կարծեն, վկայ հետեւեալ անէք-
թոտը:

Օր մը տեղ մը կը գտնուէր Այվազեան,
Վենետիկեան հայր մը հոն եկաւ: Այվազեան
քիչ մը հոքը, առանց կանխաւ վարդապետը
ճանչնալու՝ խօսքի բռնուեցաւ հետը և աղւոր
մը հարցափորձեց դայն:

Վարդապետը նոյն իսկ մաքէն չ'էր անցնէր
թէ Այվազեանին դէմ կը գտնուի:

Ծանօթ հեղինակ մը վարդապետին կը
հասկցնէ թէ՛ խօսակիցը Այվազեանն է:

— Ի՛նչ, կըսէ վարդապետը զարմացած՝
Այվազեանը դիտելով, ես ձեզ երիտասարդ
կը կարծէի:

Այն ատեն Այվազեան գլուխը բանալով՝

— Հայր Սուրբ, իրաւ թէ մազերս ձեր-
մակեն, բայց սիրտս դեռ երիտասարդ է կըսէ:

Այվազեան մինակ երեք վանք չ'է պտտած:

Ահագին անտիպ աշխատութիւններ ունի,
ընդարձակ գործերու ատաղձներ, յիշենք իր
մէկ երկարաշունչ գործը «Հայ նաւաւարները
ու նաւապետները» որ մեծ գրամատէրի մը
ձօնուած է:

Երբ Մարգարեան գրատունը երթաք գիրք
մը գնելու՝ և տեսնաք պատահմամբ մարդ
մը քիչ մը լայնկէկ որ ակնոցը աչքին, պե-
տերը վար, լուրջ դիմագիծերով, որ թերթ
մը լայնատարած բացած կը կարգայ կամ բան
մը կը գրէ և կամ կը տեսակցի՝ ատեն ատեն
քեզի զննող ակնարկ մը նետելով ակնոցին
տակէն. և նորէն երբ փողոցի մը մէջ հան-
դիպիս մարդու մը, նորէն լայնկէկ և որ ու-
ղիղ կը քալէ ու փորը տընկած, աչքերը չորս
կողմը, և շատ մը հոգիներ սանկ կէս մը կը
բարեւէ և որուն գաւազանը ուղիղ մը կե-
րերայ՝ գիտցէք որ Ա՛ն է ԱԲՐԱՀԱՄ ԱՅ-
ՎԱԶԵԱՆԸ:

Վ. Գ.

ՓՈՒԹԱՅԷ՛Ք ԴՆԵԼ ԹԵՈԴԻԿԻ ՅԱՐԵՑՈՅԵԸ

Մ Ա Հ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖԵՆՏԻ ԱԼԹԸԲԱՐՄԱՔԵԱՆԻ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

Կիրակի, Մայրաքաղաքիս առեւտրական աշխարհէն կարեւոր դեմք մ'ալ տարին յանձնել սեւ անյագ հողին :

Մահը որչափ բնական՝ սակայն ցաւն ու կսկիծը միշտ անմխիբարեղի եղած է, մանաւանդ անոնց համար՝ որոնք իրենց ազնիւ ձիրքերով, օրինակելի կեանքով եւ օգտաւաս ծառայութեամբ սիրելի եւ յարգելի դարձած են քե՛ մարդկութեան եւ քե՛ իրենց պատկանած համայնքին :

Ահա՛ այդպիսի անզուգական անձնաւորութիւն մ'էր Յարութիւն Էֆ. Ալքրբարմաքեան, որուն սուգը կողբայ այսօր ընտանիք, իր պատշոնեութիւնը, Թաղը եւ բովանդակ վաճառականական աշխարհը :

Հանգուցեալը իր պարգուքեանը մէջ վստ, իր անխօսուկ կեանքին մէջ առատաձեռն, իր գործին մէջ ջանադիր եւ իր կրօնքին մէջ հաստատ անհատ մըն էր, որուն կարգ մը բարոյական առաւելութիւններ՝ զինքն մօտէն ճանչցողներ միայն կրնան վկայել : Գործունեայ, բարի եւ եկեղեցասէր, ահա երեք չքնաղ յատկութիւններ, որոնց մարմնացումն էր պէտք է ըսել Յարութիւն Էֆենտի՝ որ ոչ եւս է :

Սակայն եթէ կայ կէտ մը՝ որ կրնայ մխիբարականը ըլլալ այս անմոռաց ցաւին, այն ալ իր սիրեցեալ եղբօր՝ Յակոբ Էֆ. Ալքրբարմաքեանի, նոյն զգացման տէր, նոյն ձիրքերով օժտուած ըլլալն է, որ պիտի շարունակէ այս մեծ վաճառասան գործառնութիւններն, միշտ անեղծ պահելով իր ողբացեալ եղբօր օրինակելի յիշատակը :

* * *

Կիրակի ժամը 6 1/2 ին ամեն ազգի ընտելալ հոծ բազմութիւն մը լեցուած էր Ս. Խաչ եկեղեցին : Տաճարին մէջեղը շէղ մահաբեմի մը վրայ դրուած էր ընկուզենիէ դազաղը, որուն վրայ ծածկած էին ծաղկեպսակներ :

Տխուր արարողութեանց կը նախագահէր Տ. Գրիգորիս Արեւայ. Յովնաննեսեան, իր շուրջը ունենալով՝ Տ. Մկրտիչ Վեհապետեան եւ Տ. Գեորգ Երեցեան եպիսկոպոսներ, ինչպէս նաեւ վարդապետներ, բազմաթիւ քահանաներ եւ դպիրներ :

Եկեղեցական արարողութիւններէն վերջ Տ. Երեցեան Սրբազան բեմ ելլալով՝ գեղեցիկ եւ բանիբուն դամբանականով մը պարգեց հանգուցելոյն ընտիր բարեմասնութիւններն, եւ իբրեւ Թաղ. Խորհրդոյ անդամ եւ Հոգաբարձու Ս. Խաչ քաղին՝ տաճած հոգածութիւններն, եւ երկնային մխիբարութիւն հայցեց իր վճարկիր ընտանիքին անդամներուն եւ բոլոր պարագաներուն :

Դամբանականէն վերջ դազաղը՝ որուն կերոնները եւ ծոպերը կը կրէին Ս. Խաչ Թաղ. Խորհրդոյ Պատ. անդամները, Հայ եւ օտարազգի ծանօթ վաճառականներ՝ առաջնորդուեցաւ մինչեւ Ինասիէի շէտակ ճամբան, ուր մասնաւոր կառնով մը փոխադրուեցաւ նաւամասոյց, ուրկէ մասնաւոր շոգենաւ մը քէ դազաղը եւ քէ յուղարկաւորաց հոծ բազմութիւնը տարաւ Սիրիէն եւ անկէ բազմաթիւ կառներով փոխադրուեցաւ Պալքըլը ամփոփուելու համար ընտանիքին յատկէ դամբարանին մէջ :

Հանրագիտակ խորապէս զգածուած այս դառն ու անակնկալ սուգին առթիւ զոր կողբայ համայնքը, ինքն ալ իր ցաւը կուգայ խառնել ընդհանուր ցաւակցութեանց եւ երկնային մխիբարութիւն կը հայցէ ողբացեալին եղբօր Ազն. Յակոբ Էֆ. Ալքրբարմաքեանի, այրի Տիկնոջը, զաւակներուն եւ ամեն անոնց՝ որոնք այս սուգը կուլան :

ԽՄԲ.

Ա.ՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԵՐ ԳՆԵՑԷՔ

ՄԱԳՐԻ-ԳԻՒԼՑԻ ՕՐԻՈՐԴԸ

(ETUDE)

Անդամ մը «Սկիւտարի երիտասարդը» նկարագրեցի ու այդ իսկ պատճառ եղաւ որ գիւղիս սիրելի բարեկամներէս մէկ քանին բարեւանք կտրեն, բան մը՝ որ հաւատացէք սրտիս շատ skrs եղած է մինչեւ այսօր:

Սակայն ասկէ չի խրատուելով անցեալները «Գում-գափուցի երիտասարդը» վերահագիր ընտրելու խալթը կերայ:

Գոնէ սա վերջինները Սկիւտարցիներուն պէս բարեւանք կտրէին, ինչ որ այնչափ խալթըս ալ չ'էր մնար, չ'ըրին, հապա հարողատ Գում-գափուցիներ ըլլալնին հաստատեցին, այսինքն՝ քիչ մը բաց խօսելով քիչ մնաց որ ոսկորներս կտոր կտոր ընէին, եթէ երբէք սիրելի բարեկամս Լիլան մէջ չի մանէր ու բարեխօսութիւն չ'ընէր:

Կը տեսնէք յօդուած գրելու անպատեհութիւնները:

Ժամերով կ'աշխատիս, անդիէն ասդիէն նիւթ կը փնտռես, գլուխդ կը ճաթեցնես, որպէս զի ան ու աս էլլիկնմիւր ըլլայ ու Տնօրէնիդ հաճելի երևանաս:

Ու փոխանակ շնորհակալ ըլլալու՝ քեզի բեհիվանութեան կը հրաւիրեն:

Եղբայր, պակաս ըլլայ ասանկ գործը, կըսես ու մէկդի կը քաշուիս:

Նորէն չ'ըլլար, ըսելը շատ դիւրին է սիրելիս՝ սակայն վազ անցնիլը... դժուար:

Այդ պակաս ըլլան ու մէյ մըն ալ չի գըրելը կը տեսէ այնչափ, որչափ որ կը տեսէ հարս ու կէտրոջ մը մուհապալիք:

Ինչպէս որ տեսաք՝ երկու անգամ կրցի ինքզինքս ազատել, սակայն երրորդին՝ օձիքս ձեռք տալուս վտանգ ըլլալով, «Մագրի-գիւլցի Օրիորդը» ընտրեցի իբր վերնագիր, փոխանակ «Մագրի-գիւլցի երիտասարդը» գրելու:

Այս անգամ ալ շատ շատ Օրիորդներէն ծեծ պիտի ուտեմ, ինչ որ կարծեմ ամէն մարդ սիրով կ'ընդունի եւ ստամոքսի ալ այնչափ չի դպիր:

Չէ՞ մի որ այսօր աղջիկէ մը ծեծ ուտելը մեզ պէս մահկանացուներու համար ամէնէն մեծ երջանկութիւններէն մէկն է, զոր մոռցած էր յիշել Ն. Թօլայ:

Ուրեմն սկսինք՝ եթէ կը հաճիք:

Մագրի-գիւլցի Օրիորդը՝ մարմնով ընդհանրապէս նիհար, իսկ հասակով Եզովբոսին և նմաններուն բերնին ջուրերը վաղցնելու աստիճան երկայն կ'ըլլայ:

Եկեղեցին կը սիրէ և սաէպ կը յաճախէ, սակայն հոն ոտք չսլիտի կոխէր եթէ երբէք ան ալ բաղնիքի պէս երեքի-սիւթի եղած ըլլար:

Մէյ մը քալուածքը՝ մէյ մըն ալ խելքը թեթեւ կ'ըլլայ (pardon):

Այնչափ խառն կը խօսի որ շատ դժուարաւ կը հասկցուի ինչ համայնքի պատկանիլը:

Սկիւտարցի մարդու տեղ չի դնէր — իբր թէ մենք զիրենք դրած ըլլայինք —, Գատը-գիւլցին իրմէ վար կը դասէ, իսկ Բերացին ալ անցած ըլլալ կը կարծէ:

Ուղած ատենը այնքան մաքուր կը խօսի որ գործդ Սկիւտարցիի մը հետ չ'ըլլալը անմիջապէս կը հասկնաս:

Մանտօրինը և Յոյն բալիֆարեանները իր ամէնէն աւելի սիրած բաներն են:

Արդուղարդին շատ հոգ կը ստանի և միշտ մաքուր կը հագուի, բնական գիւլին անունը թերեւս արդարացնելու համար:

Հագածը վայելցնելու մէջ առաջինն է եթէ ըսեմ՝ չափազանցութիւն մը ըրած չ'եմ ըլլար: Ուրիշ մը քառասուն ֆրանքնոց հագուստովը այնքան եփե մը չի կրնար ընել, որչափ Մագրի-գիւլցի Օրիորդը իր քառասուն փարանոց պլուզովը:

Երիտասարդներուն քիթէն բռնելու համար մարդու տանքով չ'ըլլար, այնչափ վարպետ է որ՝ մէկ նայուածքով քանի մը հատը մէկէն կրնայ որսալ:

Սուտեաներու հոգի կուտայ, իսկ բաղնիք երթալու բոլորովին հակառակ է, մազերուն ուղած ձեւը չի կարենալ տալուն համար:

Ընդհանրապէս բուզեկներ շատ կուեննայ, որոնց հետ պտոյտի կելլէ ամէն գիշեր մինչև ժամը 10 (Ը. Ե.):

Ժամացոյցը ալաֆուանկա կը գործածէ և կ'արդահատի մեր վրայ՝ երբ պնդենք թէ կէս օրը ժամը 7¹/₂ ին կ'ըլլայ:

Մագրի-գիւղցի Օրիորդը

Թէեւ ունեցած յատկութիւններն իրարու հետեւէ պիտի շարէի, սակայն մէկէն ի մէկ միտքս եկաւ որ այդ Օրիորդները բնականաբար մէկմէկ եղբայր կուենան և ինչպէս որ ամէն մարդ իր գործերը փաստաբանի մը կը յանձնէ՝ այնպէս ալ անոնք փոխանորդ կը կարգեն իրենց եղբայրները և կամ բուզիները, որով իմ հաշիւս բոլորովին կը փոխուի և այս անգամ կատարեալ տրամաբանի մը կուգամ:

ՆԵՐՇԱՊՈՒՀ

ՔԹԻՓԻՈՍՆԵՐԸ

Երբ քիթիփիոս կ'ըսեմ՝ իսկոյն պէտք է հասկնաք թէ անոնք հրապարակի վրայ խնդրուած կարգ մը մահկանացուներ են, որոնք բալթօնին ներկել կուտան երբ ձմեռը գայ, մէկքիթի տոմսակ կը գնեն, երբոր շուգենաւ նստելու ստիպուին, ձմեռուան լասթիկի ֆօթինը՝ ամառը կը հագնին, իրենց ձեռքով ամէն օր կ'աւելնեն, գաւազան կը գործածեն, եկեղեցի կերթան, կատարեալ կրօնասէրի մը պէս կաղօթեն, կամ թաղական են, բանկալը կսպասեն, սլքտալով անոնց քովիկը: Սիկառ կը ծխեն բաքէթը վաթսուն փարանոց տեսակէն, խահուէն ումպ, ումպ կը քաշեն, վախնալով որ շուտ կը հասնի, որով կը զրկուին ցուցամոլութեան այն տեսակէն՝ (երբ քաղինօ երթան կիրակի օրը) զոր յարգելի բարեկամս Լիւան հովարսայուքիւն բառով մկրտած էր ատենք յօդուածի մը մէջ: Ակնոց կը գործածեն, Մանդուլի քաղաքական բաժինը կը կարգան, օրուան դէպքերը աչքէ կանցնեն, թերթօնի մոլին են, խմբագրականէ համ չեն առներ, վերջապէս կատարեալ ընթերցասէրներ են, (իրենց կարծիքով), հոգ չէ թէ պարզապէս երկու բառ քովէ քով բերելով չեն կրնար երկու տող բան գրի առնել անսխալ կերպով, խմբագիրներէն կը խրաչին, (մանաւնդ Լիւան):

Այդ քիթիփիոսները տուն տեղ եղած, առուսնացած կէս երկվեցեակ զաւակներու ծը-

նունդ տուած ըլլալով հանդերձ, կրկին տանսի հոգի կուտան, զոքանջ հանրմին հետ բօքէն, պոչ և նքօն-ժէն կը խաղան: Սեղանին վրայ տիւղ ըրախի կը խմեն, պայմանաւոր, գաւաթը նախ իրենք լեցնեն ու կերկարեն խոփածափայլ սպիտակամազ պառաւ զոքանջին՝ որ ումպ մը կ'առնէ գաւաթին վրայէն ու փեսին կերկարէ և ան իր կարգին ցմբուր կը քամէ գաւաթը մէկ ումպով, կըլլելով թուքը ի տես վարդակարմիր այտերուն զոքանջ հանրմին, որ ծերութիւնը իր աւերը գործած դէմքին վրայ, լուսահոգի տաներ պապային անդրաշխարհի կեանքը ապրելու գաղափարտուելէն ի վեր:

Քիթիփիոսները ան ու առ չեն հաւնիր, զարգացած մարդիկ իրենց աչքին արժէք չունին երբեք, քաղինօճի Եօրկին, մէխանէճի Արիսթիտին անոնցմէ շատ ու շատ աւելի վարկ ունին անոնց քով:

Իրենց զաւակներուն եւրոպական կրթութիւն տալ կուզեն, (սակայն ցոյցով լոկ) Պէրպէրեանը՝ չեն հաւնիր, որովհետեւ այն տոնմային կրթութիւն միայն կուտայ կըսեն երբ առիթը գայ, Միթիթարեաններու կը դիմեն, որպէս ղի իրենց տղաք գաղղիացիի պէս գաղղիէրէն խօսին . . . ութիւններ սորվին, և ումպետ ու անհարկի գիտութիւններով կը ծանրարեւունեն տղուն միտքը որ թուլակօրէն քանի մը բառ գաղ. բռնութիւնէ անդին չանցնիր, և երբ կարգը գայ պարզ հայերէն նամակ մը գրելու կը տատամսին ու նահապետական ոճով գլուխ գործոցներ կատարաբան, որոնց մէջ առնուազն 20-30 տառասը խալ կը գտնուի, նոյն իսկ ընտանեկան նամակներուն մէջ:

Քիթիփիոսի ճաշակ, նորէն ասոնց ամէնուն աչք կը գոցեն, որովհետեւ սա համուզումը ունին թէ՛ մեր վարժարաններու մէջ մարդ բան չի սորվիր, վերջապէս օտարը, միշտ օտարը դրաւած է անոնց միտքը և երեւակայութիւնը, խեղճե՛ր չեն կրնար ճշմարիտ լաւատեսներ դառնալ դպրոցին կըրթութեան հանդէպ: Ճաւաղին կէտը հոն է որ անոնց զաւակներն ալ միշտ մի եւ նոյն վերաբերումը կը սնուցանեն մեր վարժարաններուն նկատմամբ:

ԴԵՐԱՋԻԷՆ

ԹՕԽՈՒՄՑՈՒՆԵՐԸ

Ձի մոռնանք ըսել որ Թէոդիկի
Ամէնուն Տարեցոյցը լոյս տեսաւ:

Մեղայ, մենծ, պզտիկ, օգթանճա մեղայ, մեղայ ծերադիր, մեղայ յոտնկայս, մեղայ, այնքան անգամ՝ որչափ տառեր կան հոգեհաստք բարեկամիս Թէոդիկի Ամէնուն Տարեցոյցին մէջ, զորս համբելու հոգն ու ձանձրոյթը ձեզ կը թողում: Մեղայ առաջի Աստուծոյ և առաջի մարդկան, մանաւանդ մեղայ առաջի այն կարգ մը մարդիկներուն՝ որոնք իրենց թօխումցուններուն ամուրիութիւնը կուլան, մեղայ կ'ըսեմ ու կը կրկնեմ, քանի որ ատոնց միւր պիտի ուտեմ քիչ մը, բայց հրէական սովորութեամբ ... մէջքէն վեր:

— Բաթումիչ ըլլայ ... պիտի ըսեն ... ետեւէս, ու ես պիտի թարգմանեմ, գիրնալու նշանը եղող չիպանս:

— Ձի հասնի գրելու պիտի ըսեն ... ու ես պիտի ըսեմ, գործիս անյաջողութիւնէն յառաջ գալիք պօնօնէր:

— Աչքը քէօռնայ պիտի պոռան կոնակէս ... ու ես պիտի հասկնամ՝ կարմուռն ոսկիներուն, որոնք քէն ըրածի պէս մօտս չեն պտըտկիր:

Վերջապէս, ինչպէս կը տեսնաք՝ անեծքէ ալ չեմ վախնար, ուղածնին թող ըսեն այդ կարգի կիներ, բայց պայմանաւ որ՝ ես ալ իմ կարգիս ուղածս գրեմ, մինչեւ որ յաջողիմ գտնել չիճուկ մը, որով կարենամ յաղթել և հիմնովին բուժել ՆԱԽԱՊԱՇՏԱՐՈՒՄ ըսուած եօթնագլուխ վիշապային հիւանդութիւնը, որ տարածուած է մեր միջակորեար դասակարգին մէջ, մանաւանդ կիներու համար խօսելով:

Շատ մը աղջիկներ կը տեսնամ հոս հոն, որոնք հակառակ մաղերնին վեր սոթթած չըլլալուն՝ ու կարճ ֆիստան հագնելուն, իսկոյն կարեկցելով կը կռահեմ թէ՛ ատոնք քառորդ ոսկին շատոնց աւրած օրիորդներ են, ամուսնութեան սեմին վրայ ձեռնաքաց մուրացիկներ, որոնք կապասեն ու կապասեն որպէս զի մէկը ողորմի իրենց, և սակայն իրականութեան մէջ քար պիրտ երիտասարդ-

ներ՝ կանցնին կը դառնան, և մէկը իր ակնոցին տակէն ալքեր կ'օգիւով չի նայի իրենց, և եթէ նայող իսկ ըլլայ, մօտերնին կեցող ճատաղող մայրեր մէկ մէկ պատճառաւ պատուար կըլլան անոնց առջեւ, և «կայնէ նայինք աղջիկս, տահա աղէկին պէլքի խըսմէթ կըլլաս» ըսելով՝ ժամանակ, օր, ամիս և տարիներ կանցնեն այսպէս:

Եւ այսօր քանի քանի աղջիկներ կան հրապարակին վրայ, որոնք եթէ ժամանակին ամուսնացած ըլլային՝ այսօր չըջանաւարտ տղաքներ կրնային ունենալ, և սակայն, հակառակ իրենց քաւմիւր եղած տարիքին՝ դարձեալ կառսօնէ գլխարկ կը հագնին, բուրդու ֆիստան և օրիորդ անունը:

Կը ցաւիմ չիտակը, սիրտս կտոր կտոր, ճիշերս բառչա բառչա կ'ըլլայ, սակայն ինչ օգուտ, չեմ կրնար գոհացում տալ, չեմ կըրնար մխիթարել զիրենք, քանի որ իրենց մը խիթարականը այս խնդրոյն մէջ մամոհման չէ, այլ՝ շիք փեսիկ մը որ, փիսիկի մը պէս կարենայ մուլաւ մուլաւ գգուել զիրենք:

Հիմա տեսէք թէ՛ թօխումցու՝ օրիորդ մը ինչ փորձաք է մօրը՝ որ միակ պատճառն է այդ խեղճ աղջկան թօխումի երթալուն:

* * *

Ագապի, մինակն է իր ննջասենեակին մէջ: Ճերմակ չըմիղ տընուի մը կոնակը մինչեւ ոտքերը, թեւերը և կուրծքը տէքօլթէ, մազերը ետին ձգած, լուի քեցի թալօնաւոր սկառքիները ոտքը, վեր վար սենեակին մէջ պտըտկելէ վերջ՝ կանցնի հայելին դէմ ու կսկսի ինքնիրեն խօսիլ, ճիշդ ինչպէս պիտի ընէր քաւմիւր քը ֆօռսէն փախչող հիւանդ մը:

— Է՛հ ... իշտէ ասանկ է աշխարհք, ո՛վ պիտի գայ Ագապիին օտան տէ տեսնայ հասկնայ քի՛ սուռաթա զայիֆ է ամա, միսերս տեղն են ... նա՛ թեւ, կուրծք, կէտտան ... հէլէ աչքերս պոչով կըսեն նէ իշտէ թամ անանկ, բերանս գէ՛շ է ... ակուսներէս հատ մը պակաս չուրիմ ... հէլէ մա-

զերս փռելու ըլլամ նէ, վրան մէկ չիֆթէ սանտալ մը երեզմիւն կըլլայ ... Ծաշխըն զիւպպէներ, վաղեցէք տէ երկու երեք հարուր ոսկիրն խաթերն համար չուպուխ կընիկ մը առէք, դուրսէն չոր սիւս, ներսէն չոր ոսկուռ ... Խենդ աղջիկ ... աս քանի տարի է քի խելքս կը հասնի տէ ճգիկ ճգիկ կուգամ կոր ... որին հոգը հատեր է քի Ագապին պիտի մամտայ, կոնակը տաք, փորը կուշտ է ես կըսին հէլպէթ ... Ինչ գիտեն քի, հացը տահա էզինթի կուտայ կոր, շալերուն բուրդերուն մէջը տահա կը դողամ կոր ... Ինչ անուշ բան է մեռնիլ ...

Մինչ խեղճ աղջիկը հայելին դէմ այսպէս կը զառանցէր, վարէն ճաշին զանգակը կը զարնուի:

Չի մոռնամ ըսելու որ Ագապի բարեկեցիկ և հարուստ ընտանիքի զաւակ է, եռեսունը քիչ մ'ալ անցուկ:

— Ընչ ... կերակուր ... ինչո՞ւս պէտք, ալ զգուեցայ, հացը ալ աւելի կը սեղմէ կոր հոգիս, չէ մի որ մօրս դէմը անցնիմ ուտեմ ... մայրս՝ որ իմ երջանկութեանս հացը զրկած է ինձմէ ...

Ֆոթէօյին վրայ կիշնայ արցունքոտ աչքերով, առանց կարեւորութիւն տալու վարի զանգակին որ անդադար կը զարնուէր:

— Չպիտի իջնամ, չպիտի ուտեմ, թօհաֆ բան ... այսօր ալ թող ասանկ անցնի ...

Տիկին Ֆուլիանէ տեսնելով որ օրիորդ աղջիկը չի գար, սպասաւորը վեր կը զրկէ որպէս զի իմաց տայ:

— Թըք ... Թըք ... Թըք ... Թըք ... Յակոբ կը զարնէ դրանը, մինչ ներսէն Օր. Ագապի առանց քաշուելու և նկատի առնելու իր ցեղիքի վիճակը՝ կը ձայնէ ...

— Ինչ է ան Յակոբ ... մօրի ...

— Ա՛ ... մատամազէ՛լ ... ըսելով դուրս կելլայ առանց բան մը ըսելու ...

— Եկուր ծօ՛, ինչո՞ւ կը փախչիս կոր ... եկուր, ըսէ նայիմ ինչ է ան ...

— Որիօրդ ... մայրդ վար կըսպասի, ճաշ կը պաղէ ...

— Ըսէ քի չպիտի ուտեմ, կուշտ եմ, թող իրենք ուտեն, անկէ ետքը գործդ լմընցունես նէ վեր եկուր ...

— Գելխուս վրայ Որիօրդ, ըսելով վար

կիջնայ, մինչ վերը Օր. Ագապի պահ մը խորհրդածելէ վերջ ...

— Այվաղը ... որին հոգ, հերիք է որ երիտասարդ մըն է, անոր երեսին մէկ խընդալս, իր երջանկութեան արեւն է որ կը ծագի, և թէ սա առաւելութիւնն ալ ունի որ սպասաւոր մըն է վերջապէս, ուրկէ ոչ ոք կը կասկածի: Սէրը կոյր է կըսեն, բերանը պագնեմ ըսողին, ասանկ չորս պատին մէջը հալ ու մաշ ըլլալուս՝ քիչ մը էյլէնմիշ կըլլամ: Ա՛խ ... անգամ մը փորձեմ տեսնանք ինչ բան է եզեր սիրելը և կամ սիրուելը: Ո՛վ պիտի կրնայ կասկածիլ թէ ... Ասանկ մօր հետ՝ ասանկ վարուիլ ... տեսնենք, պիտի փորձեմ, պիտի ջանամ ինքզինքս խափել ... Ինչ կըլլայ, սեպինք թէ երազ մ'է որ պիտի տեսնամ ... քեզ տեսնամ Ագապի, վրէժդ լուծէ ...

Երկու ժամ վերջ երբ մայրը վարի սենեակը ակնոցը քիթը եհռօի տանթէլ չիւնելով կը զբաղէր, առանց կարեւորութիւն տալու իր աղջկանը քաբոխին, Յակոբ գործերը կարգադրելով՝ վեր կելլայ, կարծելով թէ Օրիօրդը զինքը տեղ մը պիտի զրկէ:

— Թըք ... Թըք ... Թըք ...

— Մտի՛ր, կըսէ Ագապի, առանց ուսեւրուն չալ մը իսկ աւանելու, ներս եկուր տէ դուռը գոցէ ...

Յակոբ պահ մը քաշուելէ, կարմրելէ, ճերմկելէ վերջ՝ կը հնազանդի, առանց գիտնալու թէ՛ ինչ պիտի ըլլայ ի վերջոյ:

— Ծօ՛ Յակոբ ...

— Խրամմէ՛, Որիօրդ ...

— Ծօ՛ դուռն քանի տարու ես ...

— Հի՛ հի՛ հի՛ ... եռեսուն տարու եմ Որիօրդ ...

— Ծօ՛ կարգուած ես ...

— Հի՛ հի՛ հի՛ ... մենք ո՛վ ... կարգուողն ով, միէնք ծառայ ինք, բարայ օր կու վաստըկէնք իսէ, երկիրէն բօլիցա կու քաշին ու հոն կու պառկեցնինք ...

— Չե՛ս խպնիր ծօ՛, ինծի ասանկ կը տեսնաս կոր տէ կայներ կը խօրաթիս կոր դիմացս ...

— Էյ ... ես ինչ յանցանք ունէմ Որիօրդ, խրամանքդ իս կանչեցիր, հէմ տէ ափի

ուր դուռը դոցիմ, չեմ գիտնայ ի՞նչ կայ հոսիկիկ ...

— Ես աղուո՞ր եմ ծօ՛ Թակոբ, չիտակ ըսէ ...

— Հի՛... հի՛... հի՛... Աստուած տի-
րոջդ պաղլամիչ անէ, ի՞նչ գիտնամ ...

— Շիտակ ըսէ ծօ՛, խենդ շուն, ինծի
պէս աղջիկ մը ըլլալու ըլլայ նէ կառնեմ ...

— Հի՛... հի՛... հի՛... Ես ծառա փառ-
չասի մի եմ, խրամամենոցդ պիէս ակնի ո՞վ
կիւտայ ...

— Սանկ նայէ ամա ծօ՛ Թակոբ, ասանկ
չիշմա՞ն կուզես, չէնէ մի վայիֆ, կուտաոտ
ինտո՞ր է ...

— Ես ի՞նչ գիտնամ Որիորդ, դու ինչէ՞ր
կասես ... հի՛ հի՛ հի՛, ըսելով օձի պէս կը
սահմըռկի խեղճ Թակոբ, չի կրնալով հասկը-
նալ օրիորդին դիտաւորութիւնը, և միւս
կողմէ չողիկ վաղցնելով մարմար տէքօլթէին,
որ իր դէմը կը պարզուէր:

— Ծօ՛ ինծի նայէ Թակոբ, ասանկ ինծի
պէս աղջիկ մը ըլլալու ըլլայ նէ կը սիրեմ ...

— Աման Որիորդ ... ձգի վար էրթամ
սոֆոան ժողովիէմ ... ըթ տեսակը լաֆերը
ի՞նչ գիտնամ ... Ես ուշախ միէկն իմ ...

— Բեզի եմ ծօ՛ ... սանկ քովս եկուր
նայիմ ... մի քաշուիր, ըսածիս ճուղապ
տուր, ինծի պէս աղջիկ մը ըլլալու ըլլայ նէ
կը սիրեմ ...

— Հի՛ հա՛ ... հրպա չի՞մ սիրէ ... խը-
րամանքդ ուր պըլաբըճին կուլմանէս ...
Աստուած բարի խըսմէթ տայ ... միէնք
ծառայ ինք, մեզի ընկածը պէտէմէ ի, խը-
րամանքդ քիմ պիլիր որ մուշուին տի վար-
միշ ըլլաս ...

— Ծօ՛ Թակոբ, քեզի կը սիրեմ կոր ամա,
չելլաս մարդու բան ըսես, ասկէ ետքը դուն
իմին սիրողս պիտի ըլլաս ...

Այս անակնկալ խոստովանութենէն փայտ
կտրած Թակոբ, պահ մը շուարելէ վերջ,
ինքզինքը օրիորդին մերկ ոտքերուն մօտը
կը նետէ, և աղերսարկու ձայնով մը խօսք
կառնէ,

— Խուռպանդ ըլլիմ Որիորդ, երա՞ծ է
տեսածս, Ես քու տապաններդ կռծիմ, լա-
յը՛խ իմ ուր քեզ սիրիմ ... ֆըխաթ, գիտ-

ցիր որ քի, տարի մը կընէ հիւալ ու ֆանառ
կըլիի քեզի հըմար ...

— Իրա՞ւ ծօ՛, խենդ շուն ... սա ծառ-
քըս պագ նայիմ ...

— Պինթ էռաջ ոտքդ տի պագնիմ Որի-
որդ, ըմմա գիտցած ըզիր, մենք դուրսեցի
ինք, շախա շուխա չենք գիտնայ, օր ճիտ-
տի տի սիրես, լաւ ի չէ, էյէր քի շախա կը-
նիս ու էյէնմիշ կըլիս, ըսէ ուր Ես էլ սիրտ
չիտամ, քունչի էսանկ բաներից միէջ շախան
խագա կըլի ...

— Հայտէ ծօ՛ խենդ ... հիշ շախա կըլ-
լայ, իշտէ կը սիրեմ կոր պիտի սիրեմ, ամա
մայրիկիս, հայրիկիս քովը հիշ բան մը պէլի
չիպիտի ընես, անանկ գէլգէկ վէլգէկ տշ-
քիս մէջը նայիլ, խնդալ բան չպիտի ըլլայ
ըսեմ տէ ...

— Խաչ քի չիմ ընէ Որիորդ, պապուա
լէշը բերանս ըլլէ, էկէր օր քի ըդ տեսակ
բանմ ընիմ ...

— Էհ, նորէն ծառքս պագ նայիմ ...

— Ա՛խ ... խուռպան եմ Ես քէօ արեւ-
ուն Որիորդ ... ըմ... մ... ահ ...

* * *

Մեր թոխումցու օրիորդը իր կիրքը, լաւ
է ըսել՝ իր անփոյթ ծնողաց դէմ վրէժ լու-
ծելու համար մտածած այս անվայել ընթաց-
քը կը շարունակէ բաւական մը ատեն:

Թակոբ, ալ տանը մէջ ցնորածի պէս կաշ-
խատի, մարդ չի՛սեպէր, իր գործերուն ու-
շագրութիւն չընէր, օրը տառն անգամ վեր-
օրիորդին սենեակը կելլայ, և այնքան յա-
ռաջ կը տանի իր անփորձ սէրը՝ որ օրիորդին
ծնողացը բարկութիւնը և յանդիմանութիւնը
կը հրաւիրէ իր վրայ, և օր մըն ալ այնքան
կըլլան որ կորոշեն ճամբու դնել, բայց օրի-
որդին կրկին և կրկին թախանձանքներուն
վրայ կստիպուին տեղի տալ և Թակոբ նորէն
կը մնայ այդ տանը մէջ:

Օր մը, Ագապիենց տունը յաճախող ե-
րիտասարդներէն միւսիւ Երուանդ՝ այցելու-
թեան գալով ճաշի կը մնայ, և նոյն գիշերը
կորոշէ օրիորդին բանալ իր սէրը, և ձեռքը
խնդրել յամուսնութիւն:

Ճաշէն վերջ երբ ծնողքը վերի սենեակը
վառարանին մօտ նստած կը խօսակցին, վարի-

սենեակը Ագապի և Երուանդ քով քովի մի-
նակ մնալով՝ Երուանդ կը պատրաստուի
խօսք բանալ:

— Օրիորդ ... կեանքիս մէջ առաջին և
վերջին անգամը ըլլալով՝ կը համարձակիմ
սիրտս բանալ քեզի և յայտնել ...

— Խեղճ ես Երուանդ, առ ի՛նչ խօս-
քեր են ...

— Խեղճ ... այո՛ խեղճ մը՝ որ ձեր ոտ-
քերուն առջեւ կիյնայ, ձեր սէրը, սիրտը
ու ձեռքը խնդրելու ...

— Չոճո՛խ ... չոճո՛խ ... քեզի կը վայ-
լէ՛ ատանկ բան մը բաթ տէջի ըսել աղջկան
մը, դուն դեռ տղայ ես, ես քու մէկ ու կէս
տարիքդ ունիմ, ի՛նչպէս կուզես որ համա-
ձայնիք ...

— Հինգ տարիէ ի վեր կը մտածէի այս
քանը, քայց սպասեցի որպէս զի գոնէ պի-
տերս քիչ մը մրտախն, և հիմա՝ ...

— Միշտակ պիտե՞րով մարդս կատարեալ
չըլլար Երուանդ, խելքդ գլուխդ բեր, հէմ
հայտէ վեր ելլանք, հիմա չիւրէի կերթան
վերէն ...

— Կը սիրեմ ... ա՛խ ... կը պաշտեմ
օրիորդ, խօսք տուէք, ըսէք թէ՛ պիտի սի-
րէք զիս, պիտի ընդունիք առաջարկս ...

Եւ այս ըսելուն վրայ՝ Երուանդ՝ Ագապիի
ոտքերուն կիյնայ ձեռքերը վեր, աղօթելու
պէս, ճիշտ այն պահուն՝ երբ Յակոբ ճաշէն
վերջի սուրճը կը բերէր ափսէով ...

— Ես քու խերն իմ անիծիր, շան տղայ,
դիւն ո՛վ կըլլիս ուր իմ սէվկիւլիւիս հէշիլ-
լէնմիշ կըլլիս, ըսելուն չի մնար ձեռքի ափ-
սէն կիյնայ անագին աղմուկով, ու երկու
ռիվալները իրար կը սլլուին ու կսկսին ծեծ-
կուիլ:

Վերէն այս աղմուկը լսող Տիկին Ֆուլ-
եանէ ամուսնոյն հետ վար կը վազեն, մինչ
կապուտ կտրած Օրիորդ Ագապի ի գուր
կը ջանայ զատել իր երկու ամաւնները:

— Ծօ՛ Յակոբ, խելքի՛դ եկաւ ... ծօ՛
ի՛նչ խաթ կուտես կոր Յակո՛բ ... ձգէ
տղան ծօ՛ ... կը պոռայ մայրը շուարած,
մինչ հայրը՝

— Կայնէ նայինք գո՛րծը ի՛նչ է ... հաս-
կընանք, Յակո՛բ, Յակո՛բ, ձգէ տէ ասդին

եկուր, ըսէ նայիմ ի՛նչ եղաւ ... կըսէ դող
հլած:

— Կէպէրթմիշ տի ընիմ սա հէրիֆճի օղ-
լին ... ես նամուսի տէր իմ ... պախչա
ախշինի խըթլըխը՛ն ի ուր եկեր է իմինս ձեռ-
քէս տի առնի ... ըսելով հաղիւ կը ձգէ հա-
կառակորդին օձիքը, մինչ Ագապի դողէն
կաս կարմիր կտրած անկիւնը կը քաշուի ու
կունակի շալովը երեսը կը ծածկէ:

— Ծօ՛ ըսէ նայիմ ի՛նչ է եղէր ... կը
հարցնէ հայրը:

Յակոբ ինքզինքմէն ելած՝ կսկսի պատմել:

— Թըմամ չորս ամիս է ուր օրիորդըն իս
կը սիրէ, ես էլ ան կու սիրիմ, անանկ խօսք
արինք ուր իրար սիրինք, առ հէրիֆը տիւյ
ուր մօտը ծուռգ չըքէր ու եէշիլլէնմիշ կըլ-
լի, իրաւ քի ես ծառայ իմ՝ ֆախաթ նա-
մուսը ծառային հարուստին չի նայէր, ես ան
տի վռնտիք՝ ես ես Ագապին առնեմ էրկիր
տի երթամ ...

* * *

Հետեւեալ առաւօտուն խեղճ հայրը դեռ
լուսը չի ճեղքուած՝ դուրս կիյնայ, իր Թօ-
խումցունին գէշ աղէկ ամուսին մը գտնելու
համար, որպէս զի իր աղջիկէն առաջ պա-
տիւր փրկէ:

Նայեցէք որ ձեր աղջիկները ծաղիկ հա-
սակի մէջ ամուսնացնէք, ո՛վ ծնողք, և
չի ձգէք որ իրենց պատիւը նոյն իսկ սպա-
սաւորներու աղտոտ գուլպաներուն տակ պառ-
կըցնեն ...:


ԼԻԼԱ

ՍՏԱՅԱՆՔ

Յովհաննէս Գըլըճճեանի՝ գրավաճառ հրա-
տարակիչ, ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
անուն հատորիկը, որ կոչոււմ ունի ծանօ-
թացնել եկեղեցական երգեցողութիւնները ամ-
բողջովին:

Ամէն քրիստոնեայ և եկեղեցասէր անհատ
պարտաւոր է գնել հատ մը, ծանօթանալու
համար Կրօնի և Ս. Պատարագի արարողու-
թեանց:

Գին 60 յիարայ



ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖԻ

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ
ԲՈՒՈՐՏԻՔԸ

Ա. ՅՕԴՈՒԱԾ

(Որ յօդագաւ պիտի պատճառէ առ որ անկ է)

Այսօր, մերոյս Զիֆթէ-Սարաֆի, բարոյականի քարոզիչին, բարոյականի աօքթէօսին (Տօթ. օն-բարոյական. . .), բարոյականի վաճառականին, որ իր քովը միշտ բարոյականի սքօք մը ունի. . . Եւրոպէն իր հետը բերած, այո՛, ահա այս բարոյականի բարոյականաւորին լիճակուած է եղեր գիւտ մը յղանալ՝ մեր ինկած բարոյականին . . . Թեմէ մին ալ զարնելու :

Այսօր, պահասաւարդոյ դիցուհիք և ամենայն ստորնայարկակոտորածաբուժք, ամէնքը մէկ կը խնամարհին սա՛ «պերճաշուք ու միժակաւոյց»... ժարդա... չէնքին առաջքը:

Այսօր, հայեր, աչքերնիդ լճյա, ալ ձեր
 զաւակներուն բարոյականը՝ շիտակ ճամբուն
 մէջ մտաւ... Բերայի:

Այլ ձեր օղապքը, հայրե՛ր, իրենց առաջ-
նորդը, իրենց կարապետը ունեցան մեր ան-
զոյգ... Զոյգ-Սեղանաւորին շնորհիւ, և ալ
պիտի կարենան Շիրապէ ճամբուն ծուռ ճամ-
բաներուն... Էջնքերուն ճարտարապետու-
թիւնն ալ դիտելու:

$$Z_m', H_m', G_m' \dots$$

Ձեզի կըսեմ հայրեր ասկէ անդին ականջ
առուէք... եթէ խուլ չէք եւ կամ եթէ խուլ
չէք ձեւանար ակամայ:

★ ★ ★

Մեր բարոյականի առաքեալը, Այն պահերու նկարիչը, տեսէք ի՞նչ ըսել կուզէ այս գիրքով :

«Էֆենտիփ, մեր փողովուրդը բարոյակա-
նութեան վարժեցնելու համար, անոնց նա-
խապէս անբարոյականութեան դասեր տալ
պէտք է...

«Պրէ պապամ, ի՞նչ կը պտռաք խրեաս ի՞ վեր թէ՛ ըսածներս անբարոյեկան են, սանկ են նանկ են :

«Օրհնեալ ժողովուրդ, ձեր առջեւ զարկած կտորներս իրաւ թէ անբարոյ կտորներ են, բայց ես անո՛նք արուեստով կը զարնեմ՝ կոր, արուեստով . . . լաֆ տէյիլ :

«Պէտքեաթ վերսին ես ծներ եմ, եթէ
եւ ծնած չլլայի նէ, ո՛վ ձեր ծոած բարո-
յականին... Բայանցա պիտի կանգնէր :

«Հիւ, անցածները մամտացի որ, ես կը-
նիկ չեմ ձգած փարա կերպուցած եմ Եւրո-
պա գանուած ատենս, է՛յ հիմակ ուրկէջ
հանելու է, մամտացի, խաբած փարաս .

«Մեր ժողովուրդին պէ՛...»

Այսինքն ձեզմէ օրհնեալ ժողովուրդ:

«Ես՝ նկայե՛ս կփխմի՞ր րնեմ:

«Ամա ետքը լճանիդ քահ քահ կը խընդամ հղեր...»

✱ ✱ ✱

Ասանկ գիւք մը, որ առիւիւտ սեռով կը
ներարկէ երակներու մէջ որ անփորձ պատա-
նիներու անկուսին պատճառ կըլլայ, գի-
տէ՞ք որոնց կը նպաստէ .

— Համմէ՛ Ամբակում.

— Այն պահերու տեսարաններ օրն ի
բուն ներկայացնողներուն...

— Ու անոնք Ամբակում, թերևս կը մըտածեն «պերճաշուք եւ մեծակառոյց» արձան մը կանգնել այս «պերճաշուք ու մեծակառոյց» մարդաշէնքին...

— Այո՛, բայց երէկ գիշեր արդէն երազիս մէջ տեսայ այդ արձանը...

— Մ'ըսեք Ամբասկում:

— Եւ հաւաւարիկ. տեսայ որ բարձր մար-
մարի մը վրայ կոթողի պէս կանգնած էր
Զոյգ-Սեղանաւորնիս մէկ ձեռքը փառակազմ
«Միամիտի մը արկածնեբը» բռնած: Միւս
ձեռքովը բան մը կը մատնանչէր Զոյգ Սե-
ղանաւորը, մատնանչանածն էր «Այն պահ»ի
տեսարանը: Արձանին երկրորդ աստիճանին
վրայ, մէկ կողմը կեցած էին կիսամերկ կի-
սեր և ֆռանկախտաբոյր երիտասարդներ պար-

բռնած ու կը դիտէին Ձոյգ Սեղանաւորը: Յանկարծ տեսայ որ, Ձոյգ Սեղանաւորին հետեւէն կմախք մը վեր բարձրացաւ, Ձօլան, ու արձանին աստիճաններուն վրայ եկաւ, տեսաւ հոնտեղի տեսարանները, ձեռքերը զալարեց ու ըսաւ աչքերը գոցելով. «Ձիւ Բանթէն տարէք, չե՛մ ուզեր տեսնել ինձի հետեւողներէն մէկուն ըրած ուերները»: Այն ատեն նորէն տեսայ որ Ձոյգ Սեղանաւորը վար իջաւ իր տեղէն ու Ձօլայի առջեւը կենալով ըսաւ. «Յս, Ձոյգ Սեղանաւոր, երբ առաջին անգամ ձեռք առի Լա քերդ (La terre) հանեցի լաթերս... ինչպէս կուզես որ քեզի չը հետեւիմ»: Ու տեսայ որ Ձօլայի ամէն մէկ ոսկորները բողբոջի ձայներ հանեցին ու արթնցայ...:

* * *

Ո՛ր ձգեր էինք, հա՛.

Ու հիմտի, մեր պատանիները, արտաքին երեւոյթէ, չլացուցիչ անունէ չմորած պիտի գնեն մէյ մէկ հաստ և փառաւորապէս պիտի լափեն, ու թերեւ, հայրեր ալ պիտի գտնուին որ պիտի կարծեն թէ այդ գիրքը միամիտ մը Մարիւսական ճամբորդութիւն մը նէ և նոյն իսկ ակնարկ մ'իսկ չպիտի նետեն անոնց վրայ, մինչ անոնք, լափելէ ետքը... Եեկ լափսիի պէս բացուելով, իրենց երակներուն եռեւեղած արիւնը հանդարտեցնելու ջանքեր պիտի ընեն ու ետքը խայթուած ըլլալին զգալով հոգեւոյ չէ որ պիտի կարգան՝ Զիֆթէ-Սարաֆի...օխսը պոռնին:

Եւ մեր Ավարիները շնորհիւ այս «պերճաշուք ու մեծակառոյց» անունին՝ մատի վրայ չէ որ պիտի համրուին...

Ուստի պէտք է՝ զգուշանանք:

Ուրեմն չգնե՛լ գիրքը:

Ո՛չ, հեղինակին ինչո՞ւ լիաքս ըլլայ:

Գնենք՝ բայց սապէս ընենք.

Պասանեցաւ որ, անցեալ օր Զարդաբեան (համակրելի Պիմեհին) գրասունը գտնուիմք ես եւ Ամբակուն՝ իմ սիրեցեալս:

Ենորհմով մարդուն մէկը ներս մտաւ եւ ձեռքը գտնուած գիրք մը՝ որ Զիֆթէ-Սարաֆի Միամիտի մը արկածներն էր, գրավաճառին հետեւին նետեց եւ քսաւ.

— Նղբայր, այս ինչ անճոռնի եւ սոսկա-

լի գիրք է եղեր աս, ես կը կարծեի որ եւրոպական նկարագրութիւն մը պիտի գտնեի մեջը, մինչդեռ համեմատութեամբ նկարագրութիւնը գայ: Միւս գիրքեւ չեմ ուզեր պղծել: Եւ առաւ քալեց ԱՌԱՆՑ ԴՐԱՄԸ ԵՏ ՈՒԶԵԼՈՒ:

Հիմա, ես ներողութիւն պիտի խնդրեմ ատ անձէն, որ ճանչնալու պատիւը չունիմ, ըրած սա թուրքերանութեան համար, բայց իրեն դիտել կուտամ թէ եթէ միմալ ես ըլլայի պիտի լռէի, բայց Ամբակունը հետս, Ամբակունը, այսինքն ձեւաւորութեան ձայնը:

ԱՆՄԵՌՈՒԿ

ԼՈՅՍ ՏԵՍՆԵԼԻԻԲ ՆՈՐ ՎԵՊԸ

ԵՐԿՈՒ ՄՐՏԵՐ

«ՄԻՇԼԵՆՈՒ ԵՒ ԵՂԵՂ»

ՀԵՂԵՂԱԿ

ՏԻԱՐ ԱՐԱՄ ԴԱՐՈՒՃԵԱՆ

ԱՌԱՋԱՐԱՆ

ԱՐՄԵՆ ԻՅԵՆՏԻ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Հոգեբանական գոգսիկ ու գեղեցիկ գրուածք մը. ընդդէմ ԱՂԶԿԱՆ մը ՊՃՆԱՄՈՒԹԵԱՆ:

ՄԻԱԿ ԳՐԱՏՈՒՆԸ

Որ ալազան գրքերու ճոխ միտք մը ունի, հարկ է ըսել, Պ. ՊԱԼԵՆՑ ՏՈՒՆԵՆ է, որ արդար համբաւ մը կը վայելէ իր ճշգրտապահութեամբ և ուղղամտութեամբ:

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ

Պալենց Գրատունը իր յաճախորդներուն տըրամադրութեան տակ զրած է ալազան կաղանդէքներ, — Պարզ, քաւապաւս եւ ոսկեգոծ օրացոյցներ, շնորհաւորութեան փառքեր, բարոյական պատմութեանց հաւաքածոյներ:

Պալենց Գրատունը կեդրոնն է Ողբացեալ Ուսուցչապետ Ռ. Պէրպէրեանի վերջին գործը՝ Դպրոց եւ դպրութիւն, Իուն պիտի ըլլաս շարքն, որ կաղանդի յարմարագոյն նուէրն է թէ աղջիկներու եւ թէ մանչերու, Բարոյական պատմութեանց հաւաքածոյն (Թարգմ. Գերմաներէնէ): Հասցէ՝. — Բայց ո՛վ չի գիտեր Զաքարիայի թիւ 20 Դրամառանոցը:

Պապր-Ալի հասեւի թիւ 52.

ԱՐՍԵՆ ԼԻԻՔԵՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

— Կանխմարտ ալ կրնայ ձեզի օգնել ըսաւ Վիլսօն:

— Երբէ՛ք, մինչեւ այն օրը որ ալ պիտի կրնամ ըսել, «Արսէն Լիւքէն հոն է», ահա այն ատեն կսկսի Կանխմարտի գործը, բայց հիմակ մինակ պիտի գործեմ:

Անկողնին մօտեցաւ, և ձեռքը դրաւ Վիլսօնի ուսին վրայ — հիւանդ ատեն — և անոր ըսաւ գորովով մը:

— Խնամուեցէք, իմ ծերուկ բարեկամս, ձեր տէրըն է այսուհետեւ Արսէն Լիւքէնի քանի մը մարդոց հետ զբաղիլ, որոնք պարապ տեղը պիտի սպասեն իմ հետքս գտնելու համար: Ձեզմէ բարի լուրեր առնելու պիտի գամ:

— Շնորհակալ եմ յարեց Վիլսօն երախտագիտութիւնով համակուած, բայց խմելիք մը չէ՛ք տար ինծի...

— Ինչպէ՛ս, աղաղակեց Շօլմս, առանց ակնաջ կախելու եւ դուրս ելաւ, մինչ Վիլսօն իր ողջ թեւը դէպի գաւաթ մը պարզ ջուրը կ'երկնցնէր:

Լիւքէնի աչքերէն խոյս տալու և Մալէրայ հրապարակին անկիւնը գտնուող ճարտարապետ Տէսթանթի բնակարանէն ներս մտնելու համար — ուր ճարտարապետը իր աղջկանը Բլօթիլտի հետ կ'ապրէր — Շօլմս կըցաւ կատարեւապէս դիմափոխուիլ ու անճանաչ դառնալ:

Պ. Շօլմս, վերջին ծայր ձեւափոխուած, Սթիքման անուն մարդու մը կերպարանքով, առաւօտ մը ճարտարապետ Պ. Տէսթանթի ներկայացաւ յանձնարարականով մը: Ճարտարապետը անիկա մեծ սենեակի մը մէջ տարաւ՝ ուր մատենադարանը կը գտնուէր, և անոր ըսաւ.

— Պարոն, իմ քարտուղարս կը ծանուցանէ որ հիւանդ է և ձեզի կը զրկէ շարու-

նակելու իմ գիրքերուս ցուցակագրութիւնը՝ որ ինք սկսաւ իմ առաջարկութեանս տակ: Այս տեսակ գործեր ընելու վարժութիւն ունի՛ք:

— Այո պարոն, մեծ վարժութիւն ունիմ, պատասխանեց Սթիքման կոշտ հնչումով:

Անմիջապէս Պ. Տէսթանթ գործի սկսցուց զայն եւ գիակալի մը առջեւը նստեցուց:

Հէրլօք Շօլմս ճիշդ ուղած տեղն էր:

Իբր տեղեկութիւն մինակ սա գիտէր որ, Պ. Տէսթանթ՝ միջին առողջութիւնով անձ մը, քաշուած էր իր գործերէն եւ կ'ապրէր իր ճարտարապետական գիրքերուն մօտ:

Գալով իր աղջկան Բլօթիլտի, միշտ քաշուած իր հօրը պէս և տունէն դուրս չէր ելլեր: Հէրլօք անգամ մը տեսաւ Բլօթիլտը: Եռեսնամեայ կին մըն էր և խարտեաշ, լուրջ գէմքով մը: Նէ Շօլմսը հաեանելու զարկաւ և ինքը քսնի մը բաւերով, հասկցաւ թէ իրենց քարտուղարը փոխուած էր:

Երկրորդ օրուան առաւօտուն, Հէրլօք Շօլմս, զեռ ո եւ է հետաքրքրական գիւտ մը ըրած չէր, բայց իր զարմանալի հոտառութեամբը, հոտը կ'առնէր գաղտնիքի մը որ իր շուրջը մը թափառէր: Ինչ հրայրքոտ լուծումներ: Պ. Տէսթանթ կարելի՛ էր Արսէն Լիւքէնի գործակիցը ըլլալ, և յանձն առնելով այս գործակցութիւնը, ինչպէս նախատեսած էր այնքան տարիներ առաջ, Արսէն Լիւքէնի — այն ատեն զեռ սպասուհիի գիրկը — այս արկածները:

Արդ, ցերեկէն ետքը, դէպի ժամը հինգ, Պ. Տէսթանթ ծանոյց որ կը մեկնէր: Շօլմս մինակ մնաց բոլորածեւ պատշգամբին վրայ: Ինքն ալ կը պատրաստուէր մեկնելու, երբ ճարճատիւն մը լսուեցաւ: Ու գլուց որ նոյն ատեն, մէկը սենեակին մէջ կը մտնէր:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԱԲՆԱՅ

Արսնց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփաչեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ դիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—16



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանի
շակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ջիկասսանէ, Հնդկասսանէ, Ճալատ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան քաժնեգին	50 շրշ.	Վեցամսեայ	25 շրշ.
Գաւառաց համար	» 54 »	»	27 »
Արսասանման	» 12 ֆր.	»	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՅԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասեհի Աստուրեան տպարանի թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր լաժանորդներու անունին եւ հասցէին կցեն հաւել բաժնեգինները:

Դրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտարութով եւ կամ բոլշի քաղ սթայի փոխով 20
20 շրշի հաշուով:

Թ Է Ո Դ Ի Կ Ի Ն

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ